Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ
№11
(392)
2024 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Համագործակցության համաձայնագրեր ՌԳԱ Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի և Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի պոլիտեխնիկական համալսարանի հետ

Վերջերս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կնքվեցին համագործակցության համաձայնագրեր Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի և Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի պոլիտեխնիկական համալսարանի միջև: Նպատակն է ամրապնդել համագործակցությունը գիտական, տեխնոլոգիական և գիտակրթական ոլորտներում:

Համաձայնագրերը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի նախագահ, Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Անդրեյ Ռուդսկոն:

ՀՀ ԳԱԱ նախագահը, շնորհավորելով գործընկերներին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի 300-ամյա հոբելյանի առթիվ, նշեց, որ համագործակցությունը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտական կազմակերպությունների և գիտնականների միջև ներկայում հաջողությամբ զարգանում է: «ՌԳԱ Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի պատվիրակության այցը ևս մեկ քայլ է Հայաստանի և Ռուսաստանի գիտական ակադեմիական հաստատությունների միջև համագործակցության զարգացման գործում, որն ունի երկար պատմություն: Ձեր այցը հիանալի հնարավորություն է բաց և կառուցողական երկխոսության համար: ՀՀ ԳԱԱ ինստիտուտները երկար տարիներ համագործակցում են Սանկտ Պետերբուրգի ինստիտուտների հետ ֆիզիկայի, մաթեմատիկայի, բնական և հումանիտար գիտությունների բնագավառներում: Այսօր այդ փոխգործակցությունը կամրապնդվի համաձայնագրով, որը լրացնում է ՌԳԱ-ի և ՀՀ ԳԱԱ-ի միջև նախկինում ստորագրված գիտատեխնիկական համագործակցության մասին փաստաթուղթը: Համաձայնագրին կցված է ճանապարհային քարտեզ, որը ներառում է համագործակցության ոլորտներն ու թեմաները»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ օրեր առաջ Հայաստանում առաջին անգամ անցկացվեց Գիտության շաբաթ. «Մենք ունենք փորձի փոխանակման մեծ հնարավորություններ ինչպես գիտական հետազոտությունների, այնպես էլ գիտական արդյունքների հանրահռչակման գործում, ինչը հատկապես կարևոր է երիտասարդ սերնդի համար»:

Հանդիպման մասնակիցներին ողջունեց ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը: Դեսպանը շեշտեց Ռուսաստանի և Հայաստանի միջև կառուցողական փոխգործակցության կարևորությունը գիտական և կրթական ոլորտներում: «Այս փաստաթղթերը և դրանց իրագործումը նպատակ ունեն ընդլայնելու այդ փոխգործակցությունը: Ռուսաստանի ավելի քան 25 առաջատար գիտական հաստատությունների ու կազմակերպությունների և Հայաստանի ավելի քան 30 գիտական ինստիտուտների և կենտրոնների գիտնականները սերտ համագործակցությամբ կաշխատեն լուծել բարդ խնդիրներ: Այս փոխգործակցությունը լավ օրինակ է, թե ինչպիսի մոտեցում պետք է լինի մեր երկրների հարաբերություններում մի կողմից, իսկ մյուս կողմից՝ հարմարեցնելու կուտակված ներուժը նոր կարիքների և նոր իրողությունների համար: Ցանկանում եմ իմ անկեղծ շնորհակալությունը հայտնել ԳԱԱ-ի և ՌԳԱ-ի ղեկավարությանը երկկողմ գիտակրթական համագործակցության ոլորտում բարձր տեխնոլոգիական նախագծերի նախաձեռնման և խթանման համար»,- ասաց Սերգեյ Կոպիրկինը:

ՌԳԱ Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի նախագահ, Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի պոլիտեխնիկական համալսարանի ռեկտոր Անդրեյ Ռուդսկոն նշեց. «Մեզ համար այսօր առանձնահատուկ իրադարձություն է: Վստահ եմ, որ այս փաստաթղթերի ստորագրումը կարևոր քայլ կլինի Հայաստանի հետ կապերի ամրապնդման ուղղությամբ, որի հետ մեզ երկար տարիներ միավորում է եղբայրական պատմությունը: Մեր նպատակն է ապահովել փոխգործակցություն և կապերի ընդլայնում ԳԱԱ գիտական ինստիտուտների հետ: Մենք ցանկանում ենք համատեղ իրագործել միջպետական գիտական նախագծեր, ունենալ գիտական հրապարակումներ և, իհարկե, մշակութային արդյունքներ: Դա երիտասարդ գիտնականների փոխանակումն է, բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստումը»,- ասաց Անդրեյ Ռուդսկոն:

Ակադեմիկոս Ռուդսկոն ներկայացրեց ՌԳԱ Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղի պատմությունը և նվաճումները, անդրադարձավ ականավոր հայ գիտնականներին, ովքեր ժամանակին աշխատել և ապրել են Սանկտ Պետերբուրգում, ինչպես, օրինակ՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ Հովսեփ Օրբելին, ով ժամանակին ղեկավարել է Սանկտ Պետերբուրգի «Էրմիտաժ»-ը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական գծով պրոռեկտոր Պարգև Ավետիսյանը և ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի նաևո և մեզո համակարգերի ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը, ով նաև Սանկտ Պետերբուրգի Պետրոս Մեծի պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր է: Նրանք ընդգծեցին գիտակրթական և գիտատեխնոլոգիական համագործակցության զարգացման կարևորությունը երկու երկրների գիտական հաստատությունների միջև:

Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն Նաիրա Այվազյանը և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժ/պ Գոհար Իսկանդարյանը՝ ներկայացնելով երկկողմանի համագործակցությունը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սանկտ Պետերբուրգի բաժանմունքի հետ:

Միջազգային գիտաժողովը Երևանում էր համախմբել տարբեր երկրների առաջատար գիտնականների

Ս/թ. նոյեմբերի 20-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Սառը միաձուլման 50-ամյակը» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն և ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը: Գիտաժողովը նվիրված էր զանգվածային միջուկների սառը միաձուլման ռեակցիաների հայտնաբերման 50-ամյակին, որը տեղի է ունեցել 1974 թվականին Դուբնայում, հայազգի գիտնական Յուրի Հովհաննիսյանի ղեկավարությամբ: Այս մեթոդը թույլ տվեց Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտին, Գերմանիայի և Ճապոնիայի առաջատար լաբորատորիաներին առաջին անգամ սինթեզել 107-ից մինչև 113 ատոմային թվերով տարրեր:

Գիտաժողովին մասնակցում էին առաջատար գիտնականներ Բուլղարիայից, Գերմանիայից, Իսրայելից, Լեհաստանից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից, Չինաստանից, Ռումինիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: «Մեզ համար պատիվ է ողջունել միջազգային ճանաչում ունեցող գիտնականների ՀՀ ԳԱԱ նախագահությունում: Ակադեմիան միշտ համախմբել է աշխարհի տարբեր երկրների գիտնականների և միջազգային գիտական հանրության մաս է»,- ասաց ակադեմիկոս Սաղյանը:

Աշոտ Սաղյանը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ կառուցվածքն ու դերը: ՀՀ ԳԱԱ-ն իրականացնում է համաշխարհային նշանակության կարևոր հետազոտություններ աստղաֆիզիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, կիրառական մաթեմատիկայի և մեխանիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, հայագիտության և մի շարք այլ ուղղությունների ոլորտներում: Ակադեմիան արձանագրում է նշանակալի ձեռքբերումներ, արդյունավետ համագործակցում է հանրապետության բուհերի և պետական կառույցների, ինչպես նաև միջազգային գիտական կազմակերպությունների հետ: Համագործակցության պայմանագրեր են կնքվել ավելի քան 28 երկրների ակադեմիաների հետ: ՀՀ ԳԱԱ ինստիտուտներն ակտիվորեն մասնակցում են եվրոպական շրջանակային ծրագրերին, մասնավորապես «Հորիզոն 2020» և «Հորիզոն Եվրոպա ISTC, TEMPUS, ANSEF, NATO, BMBF»: Ակադեմիայի արտասահմանյան անդամների թվում են ավելի քան 100 հայտնի գիտնականներ աշխարհի առաջատար գիտական կենտրոններից: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է հայազգի մեծանուն գիտնական, Մենդելեևի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Ռուսաստան միջազգային մրցանակի դափնեկիր, ՌԳԱ ակադեմիկոս, ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար Յուրի Հովհաննիսյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՌԴ Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն, ՌԳԱ ակադեմիկոս Գրիգորի Տրուբնիկովը: «Երևանում ավանդաբար հանդիպում ենք մեր ընկերներին և գործընկերներին: Այսօր ունենք մասնակիցներ Եվրոպայից, Ասիայից, ԱՄՆ-ից: Սառը միաձուլման ռեակցիաների հայտնաբերման 50-ամյակը խորհրդանշական է ոչ միայն մեր ինստիտուտի, այլ նաև միջուկային ռեակցիաներով զբաղվող համաշխարհային լաբորատորիաների համար: Սա շատ կարևոր հանդիպում է մեզ համար, և պետք է պահպանվի գերծանր տարրերի սինթեզի և հատկությունների հետազոտության արդյունքները քննարկելու ավանդույթը»,- ասաց ակադեմիկոս Տրուբնիկովը:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ռուբեն Հարությունյանը ներկայացրեց Հայաստանի պատմական անցյալը, անդրադարձավ ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանի գիտական նվաճումներին՝ շեշտելով մեծանուն գիտնականի դերը միջուկային ֆիզիկայի զարգացման գործում:

Ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանը հանդես եկավ «Զանգվածային միջուկների սառը միաձուլում» զեկուցմամբ:

«Սառը միաձուլման հայտնագործությունն արդեն փոխարինվել է ուրիշներով. հայտնաբերվել են ավելի ծանր տարրեր: Սկզբում Դուբնայում գիտնականներն աշխատում էին այս մեթոդով, հետո միացան և շատ արդյունավետ աշխատեցին բազմաթիվ լաբորատորիաներ ամբողջ աշխարհից: Այս թեմայի նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացավ, ի հայտ եկան նաև նոր հնարավորություններ ու նոր գաղափարներ: Այս առումով սառը միաձուլումը արհեստական տարրերի սինթեզի պատմության ուղու միայն մի մասն է, երբ մարդը սկսեց անել այն, ինչ անում է բնությունը, բայց այլ կերպ՝ հիմնվելով առկա բոլոր գիտելիքների վրա»,- ասաց Յուրի Հովհաննիսյանը:

Շվեդիայի Լունդի համալսարանի հետազոտող Փիթեր Մոլլերը հանդես եկավ «Կարևոր տեսական զարգացումների ժամանակացույց, որը տանում է դեպի ծանր տարրերի կայունության մեր ներկայիս պատկերացումները» զեկուցմամբ:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին երեք օր: Ներկայացվեցին զեկուցումներ՝ նվիրված գերծանր տարրերի սառը միջուկային միաձուլմանը, ծանր իոններով միջուկային ռեակցիաներին, ֆիզիկական և քիմիական հատկություններին:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Չինապրանի արդիականացումը. Հայաստան-Չինապրան հարաբերությունները» միջազգային գիտաժողովը

Ս/թ. նոյեմբերի 12-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Չինաստանի արդիականացումը. Հայաստան-Չինաստան հարաբերությունները» միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի Կոնֆուցիոսի ինստիտուտի աջակցությամբ:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Չըն Մինը նշեց. «Այս տարի լրանում է հայ-չինական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 32-ամյակը: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Հայաստանի և Չինաստանի միջև զարգանում են առողջ և կայուն բարեկամական հարաբերություններ: Շահավետ շարունակական համագործակցությունը տարբեր ոլորտներում նոր արդյունքներ է գրանցել, իսկ հայ-չինական բարեկամության գաղափարը թափանցել է մեր ժողովուրդների հոգու մեջ: Որպես լավ բարեկամ և գործընկեր՝ Չինաստանը պատրաստ է Հայաստանին փոխանցել արդիականացման և զարգացման իր փորձը, խորացնել փոխշահավետ համագործակցությունը և աջակցել Հայաստանի զարգացմանն ու հայ ժողովրդի կենսապահովման բարելավմանը: Հույս ունենք ամրապնդել համագործակցությունը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակում»,- ասաց Չըն Մինը:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գևորգյանը նշեց, որ Չինաստանի արդիականացումը նոր հնարավորություններ է ստեղծում երկկողմ համագործակցության զարգացման համար: «Չինաստանի արդիականացումն էականորեն ազդել է նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացների վրա, փոխել համաշխարհային տնտեսության կառուցվածքը և գլոբալացման ընթացքը: Հնարավոր չէ այսօր հասկանալ Հայաստանի շուրջ առկա արտաքին քաղաքական միջավայրը, վերջինիս վերածնակերպման միտումները՝ առանց ըմբռնելու դրա վրա Չինաստանի աճող ազդեցությունը»,- ասաց դեսպան Վահե Գևորգյանը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Օրբելի» կենտրոնի ներկայացուցիչ Ջոնի Մելիքյանը նշեց. «Այսօր չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը համագործակցության նոր հնարավորություններ է բացում լոգիստիկայի և ենթակառուցվածքների ոլորտում: Հայաստանն աշխատում է «Խաղաղության խաչմերուկ» ենթակառուցվածքների արդիականացման նախագծի իրականացման վրա: Այս առումով երկու նախաձեռնություններն էլ կարող են փոխկապակցվել և լավ հիմք դառնալ Երևանի և Պեկինի միջև համագործակցության առավել ամրապնդման համար»:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Իսկանդարյանը նշեց. «Հայ-չինական գիտական կապերի զարգացմանը մեծապես նպաստում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան: Ակադեմիայի համակարգի բազմաթիվ ինստիտուտներ համագործակցության լավ կապեր ունեն բարեկամ Չինաստանի գիտական կենտրոնների հետ: Արևելագիտության ինստիտուտը հայ-չինական բարեկամությունը խթանող առաջամարտիկներից է: Ինստիտուտն արդեն ունի կնքված երկու պայմանագիր Չինաստանի ԱԳՆ միջազգային հարաբերությունների ինստիտուտի և Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետազոտությունների ինստիտուտի հետ»:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Արաքս Փաշայանը նշեց. «Չինաստանը ձգտում է ստեղծել ընդհանուր բարգավաճման աշխարհ: Մեր գիտաժողովը հասցեագրված է Հայաստան-Չինաստան հարաբերություններին, ինչը կարող է դիտարկվել նաև չինական արդիականացման տեսանկյունից»:

Միջոցառման շրջանակում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը և Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար Չըն Մինը քննարկեցին ՀՀ ԳԱԱ-ի և Չինաստանի գիտական կառույցների միջև իրականացվող ծրագրերը և համագործակցության հեռանկարները:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց Գիտության համաշխարհային օրը

Ս/թ. նոյեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հյուրընկալել էր հարյուրավոր աշակերտների, ուսանողների, ուսուցիչների, դասախոսների՝ նշելու Գիտության համաշխարհային օրը:

Միջոցառումը կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում:

Գիտության համաշխարհային օրվա նպատակն է բարձրացնել գիտության կարևորության մասին իրազեկվածությունը և ընդգծել գիտության դերը մարդկության կյանքը բարելավելու և գլոբալ խնդիրների լուծման գործում:

ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կառույցները տաղավարներում աշակերտների հետ գիտական փորձեր անցկացրին, ներկայացրին գիտնականի աշխատանքը, որը բացահայտումների և սովորելու մշտական գործընթաց է: Նշեցին, որ գիտնականների հայտնագործությունները և զարգացումները կարող են զգալիորեն փոխել մարդկանց կյանքը, իսկ ժամանակակից տեխնոլոգիաները նոր հորիզոններ են բացում:

Միջոցառման շրջանակում ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճներում անցկացվեցին գիտահանրամատչելի սեմինարներ: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, վիրուսաբան Հովակիմ Զաքարյանը պատմեց վիրուսային հիվանդությունների, վիրուսների էվոլյուցիայի և պատվաստումների մասին: ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հայկ Աբրահամյանը պատմեց աստղաֆիզիկայի, աստղերի, գալակտիկաների և տիեզերագիտության մասին: Ցուցադրվեց ՀՀ ԳԱԱ 80-ամյակին նվիրված ֆիլմը:

ՀՀ ԳԱԱ-ն կարևորում է դպրոցականներին դեպի գիտություն բերելը, օգնել նրանց հասկանալ գիտության կարևորությունը, տեսնել ապագան գիտության միջոցով և զարգացնել նրանց հետաքրքրասիրությունն ու ինքնավստահությունը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Համագործակցության հուշագիր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի միջև

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և ՀՀ պաշտպանության նախարարության պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՀՀ ՊՆ ՊԱՀՀ) միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր:

Հուշագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Իսկանդարյանը և ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի պարտականությունները կատարող, գիտության և կրթության գծով տեղակալ, ՊԱՀՀ-ի Ազգային ռազմավարական հետազոտությունների պետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գնդապետ Տիգրան Քոչարյանը: Գոհար Իսկանդարյանը և Տիգրան Քոչարյանը բարձր գնահատեցին գիտահետազոտական կառույցների միջև սերտ համագործակցության ծավալումն ու դրա հեռանկարային զարգացումը: Նրանք կարևորեցին մասնագիտական բնագավառներում համատեղ հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացումը և դրանց դերն ու նշանակությունը հայրենական գիտության զարգացման գործում:

Հուշագիրն ամրագրում է գիտակրթական համագործակցության ընդլայնում և ուղղությունների լայն շրջանակ, այդ թվում՝ Հարավային Կովկասի, Մերձավոր և Միջին Արևելքի անվտանգության միջավայրի ուսումնասիրության ուղղությամբ հիմնարար և կիրառական հետազոտությունների, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի քաղաքական համակարգերի, զինված ուժերի, արտաքին քաղաքականության հայեցակարգային ուղղությունների, տնտեսության, էթնիկական և կրոնական գործոնների վերաբերյալ ռազմավարական համատեղ ուսումնասիրությունների, Մերձավոր Արևելքում տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների շահերի և դերակատարման, ՀՀ մերձավորարևելյան քաղաքականության առանցքային ուղղությունների վերաբերյալ համատեղ տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացում և այլն: Հուշագրի շրջանակներում կիրականացվեն Հարավկովկասյան և Մերձավորարևելյան տարածաշրջանների առանցքային տարբեր հիմնախնդիրների հետազոտություններ, գնահատումներ, կկազմակերպվեն գիտավերլուծական համատեղ միջոցառումներ, երկուստեք հետաքրքրություն ներկայացնող թեմաների և խնդիրների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, կապահովվեն կողմերի գրադարանների, ֆոնդերի համատեղ օգտագործման հասանելիությունը և միջազգային գիտատեղեկատվական շտեմարանների նյութերի փոխանակումը: Երկու կառույցները համատեղ կիրականացնեն Հարավային Կովկասի, ինչպես նաև համաշխարհային պատմության կարևորագույն հարցերի հիմնարար և կիրառական հետազոտություններ՝ ընդլայնելով գիտակրթական համագործակցությունը հակամարտությունների և պատերազմների պատմության, տարածաշրջանային հիմնախնդիրների առնչությամբ: Ռազմավարական մակարդակի համատեղ ուսումնասիրություններ կիրականացվեն գերտերությունների, տարածաշրջանային երկրների՝ Ադրբեջանի, Թուրքիայի, Վրաստանի, Իրանի, նաև Իսրայելի և արաբական երկրների քաղաքական համակարգերի, զինված ուժերի, արտաքին քաղաքականության հայեցակարգային ուղղությունների, տնտեսության, էթնիկական և կրոնական գործոնների վերաբերյալ, մասնավորապես պատմական հոլովույթում: Կիրագործվեն նաև համաշխարհային և տեղական նշանակության ռազմական գործողությունների վերաբերյալ համատեղ օպերատիվ-ռազմավարական տեղեկատվական-վերլուծական աշխատանքներ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Պարույր Սևակ-100» հոբելյանական գիտաժողովը



Ս/թ. նոյեմբերի 5-ին ՀՀ գիտություններ-ի ազգային ակադեմիայում մեկնարկեց «Պարույր Սևակ-100» հոբելյանական գիտաժողովը՝ նվիրված հայ անվանի բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ, թարգմանիչ Պարույր Սևակի 100-ամյակին:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը: Նա նշեց, որ Պարույր Սևակի թողած ժառանգությունը բազմաշերտ է, և այս գիտաժողովը հնարավորություն է մանրամասն անդրադառնալու մեծ բանաստեղծի գիտական և գրական գործունեությանը: «Մեծանուն արվեստագետների և մտավորականների թողած գրական վաստակը ներկայացնելու և վերարժևորելու ընթացքում որոշակի մտավախություններ են առաջանում կաղապարային մոտեցումներին տուրք տալու առումով: Այդ մտավախության ռիսկերի չեզոքացման կարևոր նախապայմաններից մեկն այսպիսի գիտաժողովների կազմակերպումն է»,- ասաց նախարարը:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը ներկայացրեց Պարույր Սևակի անցած ուղին որպես գիտնական, գրականագետ, հասարակական գործիչ, նրա գործունեությունը Հայկական ԽՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: «Մեր խնդիրն է այսօրվա չափանիշներով մեկ անգամ ևս արժևորել Պարույր Սևակի թողած հարուստ ժառանգությունը՝ և՛ գրական, և՛ գիտական, որպեսզի իրազեկվի այսօրվա սերունդը Սևակի համամարդկային և հայրենասիրական գաղափարներին, հայ մարդու քաղաքակրթական մակարդակը բարձրացվի այդ գաղափարների հիմքի վրա և այդ ամենը՝ ի շահ մեր պետականության հզորացման և զարգացման», - ասաց ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Հերիքնազ Որսկանյանն իր ելույթում ասաց. «Պարույր Սևակն ի ցույց դրեց ստեղծագործող մարդուն բնորոշ հոգեկան վիճակները, արդարություն և ճշմարտություն որոնող անհատի մտատանջանքները: Սևակի որոնածը լույս էր, լույս՝ դարերի համար, լույս՝ իր ազգի համար, լույս՝ մարդկության համար: Սևակի որոնածը կյանքը հրաշք դարձնող զնգոցն էր բահի, պտղավորումը՝ այգու, փոշոտումը՝ արտի, սեղանի վրա դրված ցորենհացը՝ հունցված ազնիվ թթխմորով, անխարդախ գինին՝ մարդու սիրտը երգով լցնող: Սևակը, անշուշտ, ոչ միայն գտել, այլև մեզ համար բանաձևել էր այդ ամենը չկորցնելու ճանապարհը, այն է՝ կարողանալ մաքրվել, ինքնամաքրվել «այնպես, ինչպես օվկիանն է ինքն իրեն մաքրում»,- ասաց Հերիքնազ Որսկանյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, Պարույր Սևակի տուն-թանգարանի տնօրեն Սևակ Ղազարյանը:

«Պարույր Սևակ-100» հոբելյանական գիտաժողովը շարունակվեց մինչև նոյեմբերի 7-ը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, Երևանի պետական համալսարանում և ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, Պարույր Սևակի տուն-թանգարանը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

2024 Թ. ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԸ

Ֆիզիկայի բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է Ջոն Հոփֆիլդին և Ջեֆրի Հինթոնին՝ «Արհեստական նեյրոնային ցանցերի միջոցով մեքենայական ուսուցման ոլորտում հայտնագործությունների և գյուտերի համար»:



Ջոն Հոփֆիլդ



Ջեֆրի Հինթոն

Քիմիայի բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է ամերիկացի գիտնական Դեյվիդ Բեյքերին՝ «Սպիտակուցների համակարգչային նախագծման ոլորտում ձեռքբերումների», Դեմիս Հասաբիսին և Ջոն Ջամփերին՝ «Բարդ սպիտակուցային կառուցվածքների կանխատեսման մեթոդների մշակման համար»:

Դեյվիդ Բեյքեր **Դեմիս Հասաբիս** **Ջոն Ջամփեր**

Ֆիզիոլոգիայի և բժշկության բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է Վիկտոր Ամբրոզին և Գարի Ռուվկունին՝ «ՄիկրոՌՆԹ-ի հայտնաբերման և հետտրանսկրիպցիոն գեների կարգավորման մեջ դրա դերի համար»:

Վիկտոր Ամբրոզ **Գարի Ռուվկուն**

Տնտեսագիտության բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է ամերիկացի հայազգի գիտնական Տարոն Աճեմօղլուին, ամերիկացի գիտնականներ Սայմոն Ջոնսոնին և Ջեյմս Ռոբինսոնին՝ «Երկրների բարեկեցության և նրանց կառավարման մշակույթների միջև կապն ուսումնասիրելու համար»:

Տարոն Աճեմօղլու **Սայմոն Ջոնսոն** **Ջեյմս Ռոբինսոն**

Գրականության բնագավառում Նոբելյան մրցանակը շնորհվել է հարավկորեացի կին հեղինակ Հան Գանին՝ «Նրա հագեցած պոետիկ արձակի» համար:

Հան Գան

Խաղաղության Նոբելյան մրցանակը շնորհվել է ճապոնական Nihon Hidankyo կազմակերպությանը, որը միավորում է Հիրոսիմայի և Նագասակիի ատոմային ռմբակոծությունների տուժածներին, «Միջուկային զենքից զերծ աշխարհի կառուցելու ջանքերի համար»:

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի 100-ամյակը

Ս/թ. նոյեմբերի 13-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, վաստակաշատ գրականագետ Սերգեյ Սարինյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովը:

Սերգեյ Սարինյանի աշխատությունները նվիրված են հայ նոր գրականության պատմության, գրական ուղղությունների, գրականագիտության մեթոդաբանության ու տեսության հարցերին: Նրա գրչին են պատկանում հայ դասականների մասին մենագրություններ ու հոդվածներ: Իր աշխատությունների համար ակադեմիկոս Սարինյանն արժանացել է բազմաթիվ պարգևների և պատվավոր կոչումների:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը նշեց. «Սարինյանը ֆենոմենալ գրականագետ էր: Նա կարևորում էր գրական գործի ստեղծման գրականագիտական-գեղագիտական կարևոր սկզբունքները, նաև այն, որ գրական երկը պետք է ուղղորդի կյանքը և ունենա գաղափարական հենք: Նրա գիտական ժառանգությունը վիթխարի է, և մենք պետք է գնահատենք և արժևորենք այն»:

Սերգեյ Սարինյանը 1952 թվականից աշխատել է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, իսկ 1960 թվականից մինչև իր կյանքի ավարտը ղեկավարել է Հայ նոր գրականության բաժինը: Սարինյանի ղեկավարությամբ լույս են տեսել «Հայ նոր գրականության պատմության» 5 հատորները, որոնց համար նա ստացել է ՀԽՍՀ պետական մրցանակ: «Այդ տասնյակ տարիների ընթացքում Սարինյանը ստեղծել է ավանդույթներ, որոնք պետք է պահպանվեն»,- ասաց ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

«Իր հարցազրույցներում Սերգեյ Սարինյանը նշել է, որ Գրականության ինստիտուտը կարևոր դեր է կատարել գրականագիտական մտքի զարգացման գործում: Անշուշտ, այդ հարցում մեծ է նաև բազմավաստակ գիտնականի ներդրումը: 50-ականների սկզբից նա մտավոր-գրական կյանքի ոլորտում էր, մշտապես ուսումնասիրում էր հայ և համաշխարհային գրականությունը, յուրացնում տարբեր ուսմունքներ: Գրականությունը հոգեբանական, փիլիսոփայական լայն պարագծերում դիտարկելը հնարավորություն էր տալիս գիտնականին վերագնահատելու մեր հոգևոր արժեքները, իսկ հետազոտողից պահանջելու գիտական խորագույն, հմուտ ու նրբանկատ վերլուծություն, զգաստ գրելաոճ, գեղարվեստական ճաշակ, հայացքի ուղղություն, անհատական դրոշմ, տեսական գիտելիքներ»,- ասաց ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Հերիքնազ Որսկանյանը: Նա նշեց, որ գիտաժողովը հնարավորություն է մեկ անգամ ևս գնահատելու Սերգեյ Սարինյանի գիտական ժառանգությունը, հայագիտության զարգացման գործում նրա ունեցած դերը, ստեղծած գրականագիտական դպրոցը: Այն հարթակ է նաև անդրադառնալու գրականագիտության արդիական հիմնախնդիրներին:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը նշեց, որ Սերգեյ Սարինյանի գիտական աշխատությունները սերունդներ են կրթել և ուղենիշային են ապագա մասնագետների համար:

Գիտաժողովի ժամանակ ցուցադրվեց ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի պատրաստած ֆիլմն ակադեմիկոս Սարինյանի կյանքի ու գործունեության մասին:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև նոյեմբերի 15-ը ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Կրթական և գիտական հաստատությունների մասնագետները ներկայացրին Սերգեյ Սարինյանի գրականագիտական ժառանգությանը նվիրված ուշագրավ զեկուցումներ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Արևմտահայերենին նվիրված միջազգային գիտաժողով

Ս/թ. նոյեմբերի 7-ին ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում անցկացվեց «Արևմտահայերենը 21-րդ դարում. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով միջազգային գիտաժողովը: «Արևմտահայերենը հայերենի՝ ՀՀ պետական լեզվի լիիրավ և լիարժեք բաղադրիչն է, որ ձևավորվելով բնական զարգացման ճանապարհով՝ լեզվական մեծ հարստություն է ու կարիք ունի պետական հոգածության և գիտակրթական անհրաժեշտ վերաբերմունքի»,- բացման խոսքում նշեց ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը:

Ողջունելով ներկաներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը կարևորեց արևմտահայերենի մարտահրավերների քննությանը նվիրված գիտաժողովի կազմակերպումը, հույս հայտնեց, որ զեկուցումներում ոչ միայն կներկայացվեն խնդիրներ, այլ նաև կառաջադրվեն դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլեր և միջոցառումներ: Նա անդրադարձավ նաև հայերենի երկու ճյուղերի համընթաց զարգացման, մերձեցման ու փոխներթափանցման խնդիրներին՝ կարևորելով հայոց լեզվի միասնականության հարցը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանը, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի վարիչ Սուսաննա Տիոյանը:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, ՀՀ կառավարության «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոնի» Սփյուռքի բաժնի, «Յառաջ» արևմտահայերենի կենտրոնի, Հայաստանի հանրային ռադիոյի և Հանրային հեռուստաընկերության աշխատակիցներ, նաև մտավորականներ ԱՄՆ-ից, Լիբանանից, Կանադայից և Կիպրոսից:

Գիտաժողովի մասնակիցների ուշադրության կենտրոնում էին արևմտահայերենի կիրառության, պահպանության և ուսուցման խնդիրներն ինչպես արտերկրում, այնպես էլ հայրենիքում: Զեկուցողներն անդրադարձան նաև զուտ լեզվական խնդիրների՝ առաջնահերթություն համարելով գրական արևմտահայերենի կանոնարկումը: Առաջարկվեց ձևավորել Արևմտահայերենի պաշտպանության հայաստանյան խորհուրդ, կազմակերպել գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ՝ առկա մարտահրավերներին դիմակայելու, եղած խնդիրների վերաբերյալ լուծումներ առաջարկելու նպատակով:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ԵՊՀ-ի և Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետները:

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Սևանա լճի մեթաբոլիկ ակտիվությունը և դրա փոփոխման միտումները

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատողները նոր տվյալներ են ստացել Սևանա լճի մետաբոլիկ ակտիվությունը և դրա փոփոխման միտումները հասկանալու համար: Դրանք կարող են օգտակար լինել նաև լճի կառավարման համար:

Լճի էպիլիմնիոնային շերտում լուծված թթվածնի և օդերևութաբանական ցուցանիշների իրական ժամանակում անընդմեջ չափման արդյունքների հիման վրա վերջին տասնամյակներում, ինչպես նաև ժամանակակից մեթոդով առաջին անգամ գնահատվել է ֆիտոպլանկտոնի առաջնային արտադրությունը, դիտարկվել դրա սպառման հնարավորությունները սննդային շղթայում և կանխատեսվել փոփոխման միտումները կլիմայի սպասվող տաքացման համատեքստում:

Ֆիտոպլանկտոնը զբաղեցնում է սննդային շղթայի ստորին օղակը և ստեղծում է թարմ օրգանական նյութ անօրգանական կենսածին նյութերից, ածխաթթու գազից և արևային լույսի էներգիայից՝ սննդային աջակցություն ցուցաբերելով ավելի բարձր տրոֆիկ մակարդակներին: Միավոր տարածքում միավոր ժամանակահատվածում ֆիտոպլանկտոնի արտադրած օրգանական նյութի քանակը սահմանվում է որպես ֆիտոպլանկտոնի առաջնային արտադրություն: Սևանա լճի համար այն վերջին անգամ գնահատվել է տասնամյակներ առաջ:

«Լճի մետաբոլիկ ակտիվությունն արտահայտվում է ուժեղ սեզոնայնությամբ՝ ցուրտ ամիսներին ցածր առաջնային արտադրություն, իսկ տաք ամիսներին՝ ընդհակառակը: Լճում ֆիտոպլանկտոնի առաջնային արտադրությունը և էկոհամակարգի շնչառությունը մոտ են հավասարակշռված վիճակին, դիտվում են թույլ արտահայտված ինչպես ավտոտրոֆ (առաջնային արտադրությունն ավելին է, քան անհրաժեշտ է շնչառությանը), այնպես էլ հետերոտրոֆ (առաջնային արտադրությունն ավելի քիչ է, քան անհրաժեշտ է շնչառությանը) պայմաններ: Արդյունքները հստակորեն ցույց են տալիս առաջնային արտադրանքի էքսպոնենցիալ կախվածություն ջերմաստիճանից: Հայաստանի համար կանխատեսված է դարավերջին 6°C-ով ավելի բարձր ամառային ջերմաստիճան, քան ներկայում է: Նման սցենարը կարող է հանգեցնել լճի մետաբոլիզմի էական փոփոխության և, ի վերջո, նաև ջրիմուռային ծաղկումների հաճախականության մեծացման»,- ասաց ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Գոռ Գևորգյանը:

Ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած դրամաշնորհով՝ «ՀՀ խոշոր հիդրոէկոհամակարգերի վրա մարդածին ազդեցության էկոլոգիական վտանգների ուսումնասիրություն» ծրագրի շրջանակում:

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտաշխատողները հետազոտությունն իրականացրել են Գերմանիայի Մագդեբուրգի Շրջակա միջավայրի հետազոտությունների Հելմհոլցի կենտրոնի հետ համագործակցությամբ:

Հետազոտության մեջ ակտիվ ներգրավվածություն է ունեցել ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում փորձուսուցում անցած Ֆրանսիայի Ազգային օդերևութաբանության համալսարանի ուսանող Մաքսիմե Լաուլիերեն:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄՏ-ՔԵՐԻ ՀԱՐԹԱԿ

Ռուբեն Սաֆրաստյան. «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը պետք է մնա Հայաստանի արտաքին գործերի նախարարության օրակարգում»



Ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, արձագանքելով Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հայտարարությանը, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ԱԳՆ-ի առաջնահերթ խնդիրը չէ, նշում է, որ այս հարցը պետք է մնա ՀՀ ԱԳՆ օրակարգում, իսկ մասնագետները պետք է է՛լ ավելի խորությամբ ուսումնասիրեն մարդկության պատմության ամենասարսափելի և ողբերգական երևույթները:

Վերջերս ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը ՀՀ ԱԳՆ-ի թիվ մեկ առաջնահերթությունը չէ: Արարատ Միրզոյանը նաև ասել է՝ պատմության ողբերգական անցքերը՝ Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրելը կամ դա թիվ մեկ առաջնահերթություն դարձնելը, անշուշտ, արտաքին գործերի նախարարության օրակարգը չէ:

ՀՀ ԱԳՆ ղեկավարի հայտարարությունը Հայաստանում զայրույթ է հարուցել, իսկ թուրք քաղաքական գործիչների՝ լիակատար հավանությունը:

REGIONSTV-ի հետ զրույցում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի խորհրդական, թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանը, մեկնաբանելով Հայաստանի արտաքին գործերի նախարարի հայտարարությունը, ասաց՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը պետք է մնա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության օրակարգում. «Իսկ մենք՝ մասնագետներս՝ գիտնականները, ցեղասպանագետներն ու պատմաբանները պետք է է՛լ ավելի խորությամբ ուսումնասիրենք մարդկության պատմության ամենասարսափելի ու ողբերգական երևույթներից մեկը: Պայքարելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար, բարձրացնելով այս հարցը՝ մենք դրանով առաջադեմ մարդկության առաջատարի դիրքերում ենք լինում, քանի որ ցեղասպանությունն ինքնին մարդկության պատմության և ոչ միայն պատմության, ամենաողբերգական ու ամոթալի երևույթներից է: Մենք տեսնում ենք, որ ցեղասպանություններն այսօր կրկնվում են: Ուստի, պայքարելով անցյալում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության ճանաչման համար, մենք նպաստում ենք հետագա ցեղասպանությունների կանխարգելմանը: Այնպես որ, իմ կարծիքով, այս հարցը պետք է մնա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության օրակարգում»:

Մեկնաբանելով Թուրքիայի նախագահ Էրդողանի հայտարարությունը, թե Հարավային Կովկասում կայուն խաղաղություն ստեղծելու պատմական հնարավորություն կա, Ռուբեն Սաֆրաստյանը հիշեցրեց՝ Էրդողանը բազմիցս ասել է, որ մենք լավ հնարավորություն ունենք տարածաշրջանում կայուն խաղաղության համար, բայց այստեղ դեռ անհրաժեշտ է բացել փակագծերը:

«Մենք գիտենք և տեսնում ենք, որ Թուրքիան նախկինում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման համար նախապայմաններ էր առաջ քաշում, հիմա էլ շարունակում է այդ քաղաքականությունը: Իրականում Էրդողանը բազմիցս հայտարարել է, որ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում դրական առաջընթաց կարող է լինել միայն Ադրբեջանի և Հայաստանի միջև խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո: Փաստացի սա նախապայման է: Կարծում եմ, որ այսպես կոչված կայուն խաղաղության հնարավորության մասին խոսելիս Էրդողանն առաջին հերթին նկատի ունի, որ պետք է Հայաստանի և Ադրբեջանի միջև պայմանագիրը ստորագրվի: Այնպես որ պետք չէ ակնկալել Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում որևէ առաջընթաց Թուրքիայի կողմից, մինչև պայմանագիրը չստորագրվի»,- ընդգծեց Սաֆրաստյանը:

Կրկին վերադառնալով Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հայտարարությունը, ըստ որի՝ Ադրբեջանի կողմից ՀՀ-ի ավելի քան 200 քկմ օկուպացված տարածքի հարցը կառավարությունը մտադիր է լուծել սահմանազատման գործընթացի շրջանակներում, Ռուբեն Սաֆրաստյանը հույս հայտնեց, որ սահմանազատման գործընթացով հնարավոր կլինի լուծել Հայաստանի օկուպացված տարածքների հարցը:

«Թեև հիմա շատ դժվար է կանխատեսել, թե ինչպես կշարունակվի այս սահմանազատման գործընթացը և ընդհանրապես տեղի կունենա՞, թե՞ Ադրբեջանն ամեն կերպ այն կձգձգի: Այնուամենայնիվ, հուսով եմ, որ հայ-ադրբեջանական սահմանազատման գործընթացը կշարունակվի, և ընթացքում հնարավոր կլինի խաղաղ ճանապարհով լուծել Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքների հարցը»,- ասաց թուրքագետը:

Զաբելա ԱՎԱԳՅԱՆ

Գիտության և կրթության ներկայացուցիչները քննարկեցին հայոց լեզվի զարգացման միտումները և դրանց արտացոլումն ուսումնական գործընթացում

Ս/թ. նոյեմբերի 19-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայոց լեզու. նրա զարգացման հիմնական միտումներն ու դրանց արտացոլումն ուսումնական գործընթացում» գիտագործնական համաժողովը, որին մասնակցեց ավելի քան 100 ուսուցիչ Հայաստանի տարբեր մարզերից:

Համաժողովի նպատակն էր ներկայացնել և քննարկել լեզվամտածողության, հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության, շարահյուսության հարցեր:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Ես բարձր եմ գնահատում ձեր առաքելությունը, քանի որ դուք եք սովորեցնում ուղղագրություն և ուղղախոսություն: Լեզուն անընդհատ հարստանում է, նոր տերմիններ են առաջանում: ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ ստեղծվել է տերմինաշինության մասնագիտական խորհուրդ, որում ընդգրկված են մեր հանրապետության լավագույն լեզվաբանները: Ձեր խնդիրն է աճող սերնդին հասկացնել, որ չնայած տեխնիկական հնարավորությունների աճին, արհեստական բանականության հնարավորություններին, մարդը պետք է կարողանա ճիշտ գրել և ճիշտ խոսել իր լեզվով: Լեզվին տիրապետելու համար պետք է շատ կարդալ գրական գործեր և անընդհատ լինել լեզու սովորելու ընթացքի մեջ»,- ասաց ակադեմիկոս Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման վարչության պետ Կամո Աթայանը նշեց. «Մեր լեզուն հետաքրքիր ու հարուստ է, բայց հասարակական զարգացումները նրա առաջ ևս դնում են խնդիրներ՝ հնարավորինս հղկել, զարգացնել հայերենով ուսուցման լեզուն ու գտնել բարդ գիտությունը յուրաքանչյուրի հնարավորություններին ու ընդունակություններին համապատասխան, հանրամատչելի ներկայացնելու ուղիներ: Ձեր ստանձնած առաքելությունը բարդ ու պատասխանատու է: Այն հաջողված կլինի միայն անհատական գիտական հետաքրքրությունները մշտապես լրացնելու դեպքում»:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար, Լեզվաբանության ամբիոնի վարիչ, դոցենտ Մերի Սարգսյանը նշեց, որ գիտատեխնիկական զարգացման դարաշրջանում գերխնդիր է կրթության և գիտության շաղկապումը: «Այս չափանիշը կրթության որակի ապահովման համաեվրոպական չափանիշներից մեկն է, և հենց սա է մեր կենտրոնի ռազմավարության հիմքում: Այսօր հաճախ ենք տարբեր հարթակներից լսում, որ հայոց լեզուն կորցրել է իր դերակատարումը, որ չունի այն մեծ ազդեցությունը, որն ունեցել է նախկինում: Բայց բավական է՝ մուտք գործենք գիտության և տեխնիկայի խաչմերուկներից հանդիսացող Ինժեներական քաղաք, կտեսնենք հայագիտությունը ներկայացնող գրառումներ, իսկ Գիտության և տեխնիկայի թանգարանում կտեսնենք հայագիտության հսկաներին: Միավորենք մեր ուժերը, ստեղծենք ակադեմիաբուհ-դպրոց էկոհամակարգի առողջ փոխգործակցություն՝ մեր ուժերը ծառայեցնելու գիտության և կրթության հետագա զարգացմանը»,- ասաց Մերի Սարգսյանը:

Համաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Արժեքավոր աշխատություն

Վերջերս ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը լույս է ընծայել հայ պարբերական մամուլի պատմության մեջ անջնջելի հետք թողած «Մշակ» թերթի և նրա խմբագիր, հայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչ Գրիգոր Արծրունու գործունեությանը նվիրված՝ «Մշակը» պատմության զուգահեռականներում» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուն:

Ստորև ընթերցողին ենք ներկայացնում գրքի պատասխանատու խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանի «Երկու խոսքը»:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում 2022 թ. հունիսին կազմակերպվել էր միջազգային գիտաժողով «Մշակը» պատմության զուգահեռականներում» խորագրով՝ նվիրված Գրիգոր Արծրունու «Մշակ» լրագրի հիմնադրման 150-ամյակին: Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը՝ Հայաստանի ազգային գրադարանի և Երևանի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետի հետ գործակցությամբ: Իսկ «Հայ-Փոստ» ՓԲԸ-ն 2022 թ. իր հոբելյանական թողարկումներում ներառեց և տպագրեց «Մշակ» շաբաթաթերթի հիմնադրման 150-ամյակ» խորագիրը կրող նամականիշով բացիկ՝ 400 դրամ անվանական արժեքով և 1000 տպաքանակով՝ նախաձեռնությամբ գիտաժողովի մտահղացման հեղինակ, կազմկոմիտեի անդամ և համակարգող, պ. գ. թ. Ստյոպա Պետոյանի:

Սույն ժողովածուում վերոհիշյալ գիտաժողովի նյութերը հրապարակվում են ըստ դրանց բովանդակության՝ «Պատմություն», «Բանասիրություն» և «Մշակույթ» խորագրերի ներքո: Գիտաժողովի նյութերը խմբագրել և տպագրության են պատրաստել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի բաժնի աշխատակիցները: Դրանք գրեթե ամբողջությամբ վերաբերում են «Մշակ»-ի հրապարակումների արժևորմանը և նրա խմբագիր, հրապարակախոս Գր. Արծրունու գործունեությանը: Կարելի է արձանագրել, որ գիտաժողովի նյութերը, թեկուզև ուրվագծերով, հավակնում են ներկայացնելու մեր իրականության մեջ բացառիկ նշանակություն ունեցած այդ լրագրի և նրա ականավոր խմբագրի մտավոր ժառանգության ուսումնասիրվածության մոտավոր մակարդակն արդի հայագիտության մեջ:

Խմբագրություն

Երիտասարդ գիտնականի ամբիոն

Եվա Մելիքյան

ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող Եվա Մելիքյանը ճանաչվել է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում իրականացվող «Գիտական հոդվածների տպագրության համար երիտասարդ գիտնականների խրախուսման» մրցույթի շահառու՝ «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման ավելի բարձր քառորդում առաջին անգամ հոդվածի տպագրության համար:

Եվա Մելիքյանը ներկայացրել է «Essential L-Amino Acid-Functionalized Graphene Oxide for Liquid Crystalline Phase Formation» հոդվածը, որը տպագրվել է «Materials Science and Engineering B» ամսագրում: Հոդվածի համահեղինակներն են ՀՀ ԳԱԱ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի աշխատակիցներ Հ. Ղարագուլյանը, Վ. Հայրապետյանը, Խ. Կիրակոսյանը, Մ. Երանոսյանը և Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտի առաջատար գիտաշխատող Դ. Ղազարյանը:

Եվա Մելիքյանի հետ զրուցել ենք հետազոտության մանրամասների և գիտական հետաքրքրությունների մասին:

- Ո՞րն է աշխատանքի գիտական նորույթը.

- Մեր խմբի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել է ամինաթթուներով ֆունկցիոնալացված գրաֆենի օքսիդի հեղուկ բյուրեղային (ԳՕՀԲ) փուլը: Հետազոտության հիմնական խնդիրը 2D նյութերի (գրաֆենային ընտանիք, դիքալկոգենիդներ) հեղուկ բյուրեղային փուլի ստացումն է: Գրաֆենային նյութերի հեղուկ բյուրեղային փուլն առավելություն ունի գրաֆենային նյութերի նկատմամբ՝ կառուցվածքային դասավորվածություն, օպտիկական անիզոտրոպություն, առաձգականություն, էլեկտրաօպտիկական, ոչ գծային օպտիկական հատկություններ, ինչպես նաև զգայունություն էլեկտրական և մագնիսական դաշտերի, լույսի, ճնշման և ջերմաստիճանի նկատմամբ, որոնք բարելավման լրացուցիչ հնարավորություններ են տալիս:

Կոլոիդալ 2D նյութերը, որոնք հիմնված են գրաֆենի և նրա մոդիֆիկացիաների վրա, մեծ հետաքրքրություն են առաջացնում հեղուկ բյուրեղների փուլեր ձևավորելիս: Այս փուլերը թույլ են տալիս վերահսկել կոլոիդային մասնիկների կողմնորոշումային կարգը՝ արդյունավետ մշակման նոր ուղիներ բացելով անիզոտրոպ հատկություններով մոդիֆիկացված գրաֆենի համար: Մեր աշխատանքում ներկայացրել ենք գրաֆենի օքսիդի՝ ամինաթթուներով ֆունկցիոնալացման առանձնահատկությունները, ինչպես նաև դրա՝ հեղուկ բյուրեղային փուլը և կողմնորոշման վարքն արտաքին մագնիսական դաշտում: Մենք ուսումնասիրել ենք pH-ի ազդեցությունը ԳՕՀԲ-ի վրա՝ ցույց տալով դրա pH-ից կախված վարքը գրաֆենի օքսիդի ամինաթթուների համար:

Մենք հավատում ենք, որ մեր հետազոտությունները կարող են նոր հնարավորություններ բացել կենսանանոտեխնոլոգիաներում կիրառությունների համար՝ հեղուկ բյուրեղների ինքնակազմակերպման և վերալարման հատկությունների և գրաֆենի օքսիդի հիանալի ֆիզիկաքիմիական հատկությունների շնորհիվ: Ժամանակակից գիտատեխնոլոգիական զարգացման դինամիկան ենթադրում է, որ գրաֆենի նման նյութերի հետազոտությունները կշարունակեն առաջնահերթություն լինել գիտական հանրության համար:

- Հետազոտական ի՞նչ ուղղություն եք այժմ զարգացնում.

- Մեր թիմը մասնագիտացած է տարբեր տեխնոլոգիաների կիրառմամբ երկչափ նյութերի սինթեզի և դրանց հեղուկ բյուրեղային փուլերի ստացման ուղղությամբ: Մենք զբաղվում ենք վերջիններիս հենքի վրա հիբրիդային և հետերոկառուցվածքային համակարգերի ստեղծմամբ: Հիմնական մարտահրավերներից են այս համակարգերի ղեկավարումն արտաքին դաշտերով և դրանց ներուժի բացահայտումը՝ ժամանակակից տեխնոլոգիաներում կիրառելու համար:

Մոնիկա ԵՐԻՑՅԱՆ

Արհեստական բանականությունը Հայաստանի էներգետիկայում

Հայաստանի էներգետիկայի զարգացման գործում կարևոր նշանակություն ունի արհեստական բանականության օգտագործումը:

Ինչպե՞ս և ինչի՞ համար է արհեստական բանականությունն օգտագործվում էլեկտրաէներգիայի ոլորտում: Արհեստական բանականության օգնությամբ հնարավոր է զգալիորեն բարձրացնել էներգետիկ համակարգերի արդյունավետությունը, ինչպես նաև նվազեցնել էներգիայի սպառումը և ֆինանսական ծախսերը: Էլեկտրաէներգիայի ոլորտն օգտագործում է այս տեխնոլոգիան՝ տարբեր խնդիրներ լուծելու համար:

1. Էլեկտրական ցանցը կառավարելու համար

Արհեստական բանականության շնորհիվ հնարավոր է հեռակառավարել էլեկտրացանցը: Օգտագործելով հատուկ ալգորիթմներ և մեծ տվյալների վերլուծություն՝ հնարավոր է կանխատեսել պիկային բեռները և վերահսկել էներգիայի սպառումը: Սա թույլ է տալիս նվազեցնել ծախսերը և խուսափել ցանցի գերբեռնվածության հետ կապված խնդիրներից: Արհեստական բանականությունը կարող է նաև օգնել հայտնաբերելու և կանխելու համակարգի խափանումները, ինչը մեծացնում է դրա հուսալիությունը և օգնում կանխել արտակարգ իրավիճակները:



2. Էներգաարդյունավետությունը բարելավելու համար

Քանի որ տեխնոլոգիան ի վիճակի է վերլուծելու մեծ ծավալի տվյալներ, որոշելու համակարգի շահագործման օպտիմալ պարամետրերը, որը հնարավորություն է տալիս նվազեցնելու բնապահպանական ռիսկերը և սպառվող էներգիայի քանակը: Օրինակ՝ արհեստական բանականությունը կարող է օպտիմալացնել օդորակման համակարգի աշխատանքը՝ նվազեցնելով էներգիայի ծախսերը, և փոքրացնել շրջակա միջավայր վնասակար արտանետումների քանակը:

3. Սարքավորումների վիճակի մշտադիտարկում և վերահսկում

Արհեստական բանականությունը թույլ է տալիս վերահսկել սարքի աշխատանքի ցանկացած ծախողում և խնդիր: Տեխնոլոգիան ի վիճակի է հայտնաբերելու խնդիրը վաղ փուլում: Դրա շնորհիվ կարելի է կանխել բազմաթիվ անսարքություններ և անցանկալի հետևանքներ: Մարդը միշտ չէ, որ կկարողանա արագ բացահայտել անսարքությունը, բայց «մեքենան» դա անում է ավելի ճշգրիտ և արագ:

4. Տեխնոլոգիաների օգտագործման հեռանկարները

Փաստորեն էլեկտրական թվային համակարգերը վաղուց վերահսկվում են համակարգչի միջոցով: Մարդը պարզապես ի վիճակի չէ անընդհատ մշակելու տվյալների քանակությունը, որը հասնում է միանգամից բոլոր կետերից: Բոլոր պարամետրերը ձեռքով կառավարելը պարզապես անհնար է: Հետևաբար, օգտագործվում է արհեստական բանականության վրա հիմնված թվային համակարգ:

Էլեկտրաէներգիայի ոլորտում գիտնականները պարբերաբար ներկայացնում են նոր մշակումներ և լուծումներ, որոնք հիմնված են այս տեխնոլոգիայի վրա:

Կան նախագծեր, որոնցում արհեստական բանականությունն օգտագործվում է սարքավորումների, առանձին տարրերի ստեղծման և էլեկտրացանցը կառավարելու համար:

Արհեստական բանականության օգտագործման հիանալի օրինակ է որակի կանխատեսման և էներգիայի արտադրության փոխանցման և բաշխման համակարգը: Դրանով կարող ենք պլանավորել արտադրությունը և պահպանել համակարգի արդյունավետությունն ու կայունությունը:

Ներկայում Հայաստանում անհրաժեշտ է մեծ տեղ հատկացնել էներգետիկական համակարգի ավտոմատացմանը և ծախսերի կրճատմանը: Բնական է, որ արհեստական բանականությունը չի կարող 100%-ով փոխարինել մարդկանց: Սակայն այն զգալիորեն կբարձրացնի էներգահամակարգի շահագործման արդյունավետությունը, կնպաստի բնապահպանական խնդիրների լուծմանը:

Անհրաժեշտ է բուհական համակարգում ունենալ առանձին առարկա:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

Դեյլ Քարնեգիի խորհուրդներից



Ամեն մարդ օրվա ընթացքում թեկուզ հինգ վայրկյան հիմար է: Իմաստությունն այդ ժամանակային սահմանը չանցնելն է:

Ուզո՞ւմ ես մեղր ունենալ, մի՛ ոչնչացրու փեթակները:

Ապագայի ծանրությունն անցյալի ծանրության հետ, որոնք դուք վերցնում եք ձեզ վրա ներկայում, ստիպում է ճանապարհին սայթաքել նույնիսկ ուժեղներին:

Երբ մարդը սկսում է պատերազմել ինքն իր հետ, նա արդեն ինչ-որ արժեք ունի:

Ձեր ամուսինն, անկասկած, բազում թերություններ ունի: Եթե նա սուրբ լիներ, ապա նա Ձեզ հետ չէր ամուսնանա:

Եղե՛ք զբաղված: Դա աշխարհում ամենաէժան և ամենաարդյունավետ դեղամիջոցն է:

Արտահայտությունը, որ կրում եք ձեր դեմքին, շատ ավելի կարևոր է հագուստներից, որ հագնում եք:

Երբ ցանկություն առաջանա փոփոխել մարդկանց, սկսեք ձեզանից: Դա և՛ օգտակար է, և՛ անվտանգ:

Հիշե՛ք, որ մարդու անունն իր համար ամենաքաղցր և ամենակարևոր ձայնն է յուրաքանչյուր լեզվով:

Մեր դժբախտությունների գաղտնիքն այն է, որ մենք շատ ազատ ժամանակ ունենք մտածելու համար՝ երջանի՞կ ենք մենք, թե՞ ոչ:

Մի՛ վախեցեք թշնամիներից, որոնք հարձակվում են ձեզ վրա, այլ վախեցե՛ք բարեկամներից, որոնք քծնում են ձեզ:

Ձեր առջև մարդկային բնավորությունն է գործողության մեջ. մեղավորը պատրաստ է մեղադրելու ում պատահի, միայն ոչ իրեն:

Ինչ-որ բան սովորելու մեծ ցանկությունը հաջողության կեսն է:

Այս աշխարհում գոյություն ունի սեր ստանալու միայն մեկ միջոց՝ դադարել պահանջել այն և սկսել սեր տալ, առանց շնորհակալության ակնկալիքի:

Հետաքրքիր զուգադիպություններ

Նապոլեոնը ծնվել է 1760 թ., իսկ Հիտլերը՝ 1889 թ.: Տարբերությունը կազմում է 129 տարի:

Նապոլեոնը մտել է Վիեննա 1809 թ., Հիտլերը՝ 1938 թ., տարբերությունը՝ 129 տարի:

Նապոլեոնն իշխանության գլուխ է անցել 1804 թ., Հիտլերը՝ 1933 թ.: Տարբերությունը՝ 129 տարի:

Նապոլեոնը պատերազմ է սկսել Ռուսաստանի դեմ 1812 թ., Հիտլերը՝ 1941 թ.: Տարբերությունը՝ 129 տարի:

Երկուսն էլ անցել են իշխանության գլուխ 44 տարեկան հասակում:

Երկուսն էլ Ռուսաստան են եկել 52 տարեկան հասակում:

***

Լինկոլնը դարձավ ԱՄՆ-ի պրեզիդենտ 1860 թ., Քենեդին՝ 1960 թ., տարբերությունը կազմում է 100 տարի:

Երկուսն էլ սպանվել են ուրբաթ օրը, իրենց կանանց ներկայությամբ:

Լինկոլնի սպանությունից հետո նրա հետնորդը եղավ Ջոնսոնը: Քենեդու սպանությունից հետո նրա հետնորդի անունը նույնպես Ջոնսոն էր:

Ջոնսոնը (Լինկոլնից հետո) ծնվել է 1808 թ., Ջոնսոնը (Քենեդուց հետո)՝ 1908 թ.: Տարբերությունը նույնպես 100 տարի է:

Երկու Ջոնսոններն էլ նախքան պրեզիդենտ դառնալը եղել են դեմոկրատներ հարավից:

Լինկոլնի ենթադրյալ սպանողը՝ Ուիլկը, ծնվել է 1829 թ., Քենեդու ենթադրյալ սպանողը՝ Օսվալդը՝ 1929 թ.: Տարբերությունը նույնպես կազմում է 100 տարի:

Լինկոլնի քարտուղարի անունը Քենեդի էր, որը և համառորեն խորհուրդ է տվել Լինկոլնին սպանության գիշերը թատրոն չգնալ:

Քենեդու քարտուղարի անունը նույնպես Լինկոլն էր, որը ևս խորհուրդ է տվել նրան հետաձգել Դալլաս գնալու ուղևորությունը:

Ռուս մանկագրության հայտնի հայուհիները

Հայոց պատմական Ջավախք գավառի Ախալցխա մշակութաշեն քաղաքը հետաքրքիր զուգադիպությամբ երկու հայտնի հայուհի է պարգևել ռուսական մանկագրությանը: Նրանցից ախալցխացի հոր և ռուս մոր զավակ Իրինա Տոկմակովան (ծնյալ Արուսյակ Մանուկյան, 1929-2018) բավական հայտնի անուն է: Մյուսն ավելի ավագ սերնդից էր և ի տարբերություն Տոկմակովայի՝ զտարյուն հայ էր, ծնված հենց Ախալցխայում: Խոսքը գրող, թարգմանչուհի և գրականագետ Նադեժդա Շերի (1890-1976) մասին է, որի հայկական անուն-ազգանունը եղել է Հեղինե Բահաթուրյան (Բագատուրովա): Իսկ եթե նկատի ունենանք, որ վերջինիս դուստրը՝ Նադեժդա Կալինինան, նույնպես մանկագիր էր, ապա կարող ենք ասել, որ ռուս մանկագրության մեջ եղել են ծագումով Ախալցխայից առնվազն երեք հեղինակ...

Հեղինե-Նադեժդան ծնվել է 1890 թվականի մարտի 6-ին ճարտարագետ Սերգեյ Բագատուրովի (Սարգիս Բահաթուրյան) ընտանիքում: Սովորել է գիմնազիայում, այնուհետև ավարտել է Մոսկվայի՝ կանանց բարձրագույն դասընթացները: Մոսկվայում գեղեցկատես Հեղինե-Նադեժդան բուռն սիրավեպ է ունեցել հայտնի աստվածաբան և գրող Վալենտին Պավլովիչ Սվենցիցկիի (1881-1931) հետ, որը հետագայում դարձել է ռուս ուղղափառ եկեղեցու հոգևորական: 1908-ին Նադեժդա Բահաթուրովան մեկնել է Ֆինլանդիա՝ ծննդաբերելու: Դստերը նա կոչել է իր ռուսական անվամբ: Այս սիրո պատմությունը հետագայում դարձել է Սվենցիցկիի «Պաստոր Ռելինգ» պիեսի թեման, որտեղ ավագ Նադեժդան ներկայանում է Տորա, իսկ կրտսերը՝ Տորիկ անուններով:

Դստեր ծննդից շատ չանցած՝ Նադեժդային ամուսնության առաջարկ է արել երկրաբանական և հանքային գիտությունների դոկտոր, գրող Դմիտրի Վլադիմիրովիչ Շերը, որը որդեգրել է Հեղինեի դստերը՝ նրան և կնոջը տալով իր ազգանունը: Նրանք ունեցել են երկու զավակ: Դուստրը՝ Մարիա Պուշկարյովա-Շերը (1915-2002) մանկավարժական գիտությունների թեկնածու էր, գրականության դպրոցական դասագրքերի հեղինակ, իսկ որդին՝ Սերգեյ Շերը (1918-1990), գնացել է հոր հետքերով՝ դառնալով երկրաբան:

1910-1911 թվականներին Շեր ամուսիններն ապրել են Իտալիայում, որտեղ Նադեժդան աշխատել է գրականության վերաբերյալ իր կուրսային աշխատանքի վրա, նաև ծանոթացել իտալացի մանկավարժ Մոնտեսորիի հիմնած «երեխաների տներին»: Վերադառնալով Մոսկվա՝ Նադեժդան համագործակցել է «Համընդհանուր գրադարան» հրատարակչության հետ, ռուսերեն թարգմանել գրքեր մանկավարժության վերաբերյալ և գեղարվեստական գործեր: Նա թարգմանություններ է կատարել իտալերենից, ֆրանսերենից, գերմաներենից և անգլերենից, այդ թվում՝ Կ. Ա. Հելվեցիուսի «Աստված-բնություն-մարդը» (1922), Ռ. Գյուրթլերի «Փորձառու ուսուցում՝ հիմնվելով գրավչության և հույզերի վրա» (1922), Պիեռ Բենուայի «Մեծ ամրոցի տիրուհին» (1924), Վ. Բոնզելսի «Տավիղը» (1924), նաև Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպի կրճատ տարբերակը (1927): Գրել է մի շարք պատմվածքներ և տեղեկատվական գրքեր երեխաների համար: Մի քանի հրատարակությամբ և տարբեր լեզուներով թարգմանությամբ լույս են տեսել Նադեժդա Շերի «Պատմվածքներ ռուս գրողների մասին» (1957) և «Պատմվածքներ ռուս նկարիչների մասին» (1966) ծավալուն գրքերը: Բացի այդ, նա կազմել և խմբագրել է մանկական գրականության բազմաթիվ ուղեցույցներ, ժողովածուներ և դասագրքեր: Ամբողջ կյանքում ուսումնասիրել է համաշխարհային մանկագրության և մանկական գրքի պատմությունը, Մոսկվայի մանկական գրքի թանգարանին է հանձնել իր անձնական գրադարանի մոտ 17 հազար գրքերը...

Եվրոպական լեզուներից բացի, Նադեժդա Շերը թարգմանություններ է կատարել նաև հայերենից, սակայն մեզ տակավին չի հաջողվել պարզել, թե կոնկրետ ո՞ր հեղինակներից: Տարբեր ազգերի երեխաների մասին գրող հեղինակը, բնականաբար, չէր կարող շրջանցել նաև իր հայրենակիցներին: Հավանաբար հայ է նրա «Ջանիկն ու Կիրյուշան» պատմվածքի հերոս Ջանիկը, իսկ «Նոր տունը» պատմվածքը ներկայացնում է Ադրբեջանում գտնվող մանկատանն ապրող երեխաների կյանքը, որտեղ, հակառակ ազգային նախապաշարմունքներին, միասին են ապրում հայ, քուրդ և ռուս երեխաները...

Հատկանշական է նաև, որ դեռևս 1935 թվականին Հայաստանի «Պետհրատը» առանձին գրքույկով հրատարակել է Նադեժդա Շերի «Այնա» վիպակը՝ Ե. Քալաշյանի թարգմանությամբ: Իսկ 1964-ին Երևանի «Լույս» հրատարակչությունը տպագրել է Նադեժդա Շերի թերևս ամենահայտնի՝ «Պատմվածքներ ռուս գրողների մասին» գիրքը: Դժվար թե այն ժամանակ գրքի հրատարակիչներն ու ընթերցողներն իմանային, որ գրքի հեղինակն իրենց հայրենակցուհին է...

Նադեժդա Շերի դուստրը՝ Նադեժդա Կալինինան, որը, ինչպես նշվեց, նույնպես մանկագիր էր, դժվարին, փոթորկալից կյանք է ունեցել: Մանկուց հանդես է եկել Եվգենի Վախթանգովի ստուդիայում (այժմ՝ Վախթանգովյան թատրոն), կատարել Միտիլի դերը Մետերլինկի «Կապույտ թռչուն» պիեսում: Մայրը չի խրախուսել դստեր դերասանական հակումները, ուստի նրան ուղարկել է գիշերօթիկ դպրոց՝ ստեղծագործական բոհեմից հեռու: Սակայն այնտեղ 15-ամյա Նադյան սիրահարվել է ֆիզիկայի ուսուցչին: Այս սիրուց վախենալով՝ Նադեժդա Սերգեևնան դստերն ուղարկել է Բաքու՝ հայ ազգականների մոտ: Սակայն սիրահարված ուսուցիչն աղջկա հետևից հասել է Բաքու՝ չունենալով նրա հասցեն, և, որքան էլ զարմանալի է, հարցուփորձ անելով՝ գտել է նրան: Ազգականները խուճապահար են եղել: Նրանք աղջկան հետ են ուղարկել Մոսկվա, որտեղ արդեն ուսուցիչը չէր կարող գտնել նրան... Հետագայում կրտսեր Նադյան ամուսնացել է երկու անգամ, առաջին ամուսնությունից ունեցել մեկ, երկրորդից՝ երեք որդի, որոնք մեծացել են հայ տատիկի մոտ, երբ նրանց հայրն աքսորվել է Սիբիր: Էվակուացիայի տարիներին մահացել է Դմիտրի Շերը, և երեք զավակների հոգսն ամբողջությամբ ընկել է երկու Նադեժդաների վրա... Պատերազմից հետո կրտսեր Նադեժդան հանդիպել է ամուսնուն, ծնվել է ևս մեկ որդի: Նա ևս հրատարակել է մանկական գրքույկներ, աշխատել է ռադիոյում՝ պատրաստելով մանկական հաղորդումներ: Եղբոր՝ Սերգեյ Շերի հետ գրել է «Ինչպես են փնտրում այն, ինչ գտնվում է հողում» մանկական գրքույկը երկրաբանության մասին: Նադեժդա Կալինինան մահացել է 1998-ին, 90 տարեկանում...

Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ-ում աշակերտներին և ուսանողներին ներկայացվեցին ալկոհոլից և թմրանյութերից կախվածության հետևանքները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Գիտությունն այսօր» շարքի 5-րդ գիտահանրամատչելի սեմինարը՝ «Թմրամիջոցները և դրանց հետևանքները» թեմայով: Սեմինարին մասնակցեցին ավագ դպրոցների աշակերտներ և բուհերի ուսանողներ:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ Ռուբեն Հարությունյանը նշեց, որ «Գիտությունն այսօր» շարքի սեմինարների ժամանակ աշակերտների և ուսանողների հետ քննարկվում են բնական գիտությունների ոլորտի արդի թեմաները: «Մինչ այս մենք խոսել ենք մեր ժողովրդի գենետիկայի մասին, նաև գենոմիկայի և բժշկության, բյուրեղագիտության, առողջ սննդի: Այսօր դուք կհանդիպեք պրոֆեսիոնալների հետ: Մեր հանդիպման թեման արդիական է: 2022 թվականի հունվարի դրությամբ Առողջապահության նախարարության թմրամոլության բուժման ազգային կենտրոնում և նարկոլոգիական ծառայություններում գրանցվել է թմրամիջոց օգտագործած 7570 անձ: Իհարկե, թմրանյութերից և ալկոհոլից կախվածություն ունեցողների թիվը հասնում է տասնյակ հազարների: Իսկ ամենավատն այն է, որ, ըստ մասնագետների, Հայաստանում ալկոհոլիզմն ու թմրամոլությունը երիտասարդանում են»,- ասաց Ռուբեն Հարությունյանը:

Նա անդրադարձավ ժառանգականության դերին ալկոհոլի և թմրանյութերի կախվածության մեջ: «Գիտությանը հայտնի է, որ մենք բոլորս ունենք թմրամիջոցների և ալկոհոլի նկատմամբ հակվածության տարբեր մակարդակներ: Ի վերջո, նույնիսկ խթանիչների, օրինակ, սուրճի կամ թեյի նկատմամբ մեր գենետիկ հակվածությունը սահմանված է ավելի քան 60 տոկոս: Այսինքն՝ մեր վարքագիծը զգալիորեն կարող է պայմանավորված լինել բնածին կախվածություններով: Պետք է ունենալ բարձր գիտակցություն և կամքի ուժ՝ դրանք հաղթահարելու համար: Այստեղ ամենակարևոր դերը պետք է ունենան կրթությունը, դաստիարակությունը և հասարակությունը»,- ասաց պրոֆեսոր Հարությունյանը:

Հետազոտությունները ցույց են տվել, որ գենետիկ գործոնները կախվածություն առաջացնող նյութերի նկատմամբ կազմում են 50-60%: «Չկա ալկոհոլիզմի մեկ գեն, սակայն հայտնի են առնվազն մի քանի տասնյակ գեներ, որոնք որոշում են ալկոհոլային կախվածությունը: Այն ընտանիքներում, որտեղ ծնողները չեն օգտագործում ալկոհոլային խմիչքներ, երեխաների միայն 5%-ի մոտ կարող է առաջանալ կախվածություն ալկոհոլից: Իսկ երբ ծնողներից մեկը հարբեցող է լինում, կախվածության ցուցանիշը հասնում է 18%-ի: Ալկոհոլն ուժեղ մուտագեն չէ: Այնուամենայնիվ, այն ունի տերատոգեն ազդեցություն, առաջացնում է բնածին արատներ, հաճախ՝ օլիգոֆրենիա, այսինքն՝ մտավոր հետամնացություն»,- ասաց Ռուբեն Հարությունյանը:

Ալկոհոլի և թմրանյութերի օգտագործման հոգեբանական հետևանքները ներկայացրեց «Rehab.am» վերականգնողական կենտրոնի ծրագրային ղեկավար, հոգեբան Մարիաննա Աբովյանը: Նա նշեց, որ ալկոհոլիզմն ու թմրամոլությունն առաջացնում են բազմաթիվ ֆիզիկական և հոգեբանական հիվանդություններ: Ալկոհոլիզմից տարեկան մահանում է մոտ 3 միլիոն մարդ, իսկ թմրամոլությունից՝ 300 հազար: «Այդ կախվածությունը խաթարում է մարդու կյանքը, հարաբերություններն ընտանիքի հետ, զրկում է մարդուն իր արժեհամակարգից: Ի վերջո, մարդը զրկվում է առողջությունից, կյանքից, հայտնվում հիվանդանոցում կամ բանտում»,- ասաց Մարիաննա Աբովյանը:

Նա անդրադարձավ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով թմրադեղերի տարածման, անչափահասներին հանցավոր ճանապարհով այդ գործունեության մեջ ներգրավելու նոր մեթոդներին: Նշվեց, որ թմրամոլությունը ներկայացվել է որպես հիվանդություն, որը գրանցված է հիվանդությունների համաշխարհային ռեգիստրում՝ ICD 10, որպես խանգարում, որն ազդում է մարդու կենսաբանական, հոգեբանական, սոցիալական և արժեքային ոլորտների վրա: Հատուկ ուշադրություն դարձվեց բուժման և վերականգնման մեթոդներին: Նարկոլոգիական ամենապահանջված կլինիկաներից է ՀՀ առողջապահության նախարարության կախվածությունների բուժման ազգային կենտրոնը: Բուժում անցնողները, իրենց ձեռքբերածն ամրապնդելու նպատակով, շարունակում են վերականգնումը Rehab.am կենտրոնում: Մասնագետը շեշտեց, որ հետաքրքիր, լիարժեք և բովանդակալից կյանքը կախվածության հիվանդության լավագույն կանխարգելումն ու բուժումն է:

Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Գագիկ Մելիքյանը խոսեց հոգեմետ նյութերի, միացությունների մասին, որոնք կարող են ճնշող ազդեցություն ունենալ մարդու նյարդային համակարգի վրա, առաջացնել հոգեկան շեղումներ, հիմնականում ձայնային կամ լսողական հալյուցինացիաներ: Միաժամանակ այդ նյութերից մի քանիսն օգտագործվում են բժշկության մեջ, այդ թվում՝ հոգեկան խանգարումների բուժման համար: «Չմոռանանք, որ հոգեակտիվ նյութերի չարաշահումը խնդիր է համաշխարհային մասշտաբով, հատկապես փոքր ժողովուրդների համար, որոնք դրա հետևանքով կարող են դեգրադացվել կամ իսպառ վերանալ»,- ասաց Գագիկ Մելիքյանը:

Հայկական հոգեբուժական ասոցիացիայի կախվածությունների սեկցիայի ղեկավար, հոգեբույժ-նարկոլոգ Արտաշես Թումանյանը նշեց, որ կախվածությունը բարդ երևույթ է, որը ներառում է հոգեբանական, սոցիալական և կենսաբանական փոփոխություններ: Դա նաև հանգեցնում է վարքագծի փոփոխության: Կախվածության պատճառներից մեկը ներքին կարիքները բավարարելու ցանկությունն է, օրինակ՝ հաղթահարել սթրեսը կամ ցավը: Այնուամենայնիվ, ալկոհոլը կամ թմրանյութերն ամենից հաճախ օգտագործվում են հաճույքի համար, և ժամանակի ընթացքում դա կարող է վերածվել սովորության:

«Մեր վարքագիծը, մեր վատ սովորությունները ոչ միայն վնաս են հասցնում մեր գենոմին, այլև ազդում են մեր ապագա սերունդների գեների արտահայտման վրա: Այնուամենայնիվ, չնայած մեր գենետիկ հակվածությանը, մենք կարող ենք առողջ լինել, եթե վարենք առողջ ապրելակերպ: Հենց միջավայրն է որոշում գենետիկական գործոնների մեծ մասի դրսևորումը: Եվ, հակառակը, ունենալով առողջ գեներ, բայց սխալ ապրելակերպ, կարող ենք վնասել ինքներս մեզ և մեր ապագա սերունդներին»,- եզրափակեց Ռուբեն Հարությունյանը:

«Գիտությունն այսօր» շարքը նախաձեռնել և իրականացնում են ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը և ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի և երիտասարդական ծրագրերի վարչությունը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԻՑ

* * *

Անգլիացի աշխարհահռչակ գրող Արթուր Կոնան Դոյլը՝ «Նոթեր Շերլոկ Հոլմսի մասին» գրքի հեղինակը, մի անգամ այսպիսի կատակ է անում: Տասներկու հարգարժան, կրթված և, որ ամենակարևորն է, խստաբարո բանկիրների ու բարձր պաշտոնյաների ուղարկում է միատեսակ հեռագրեր. «Ամեն ինչ բացվել է, իսկույն փախի՛ր»: 24 ժամվա ընթացքում բոլոր այս «անբիծ» մարդիկ խուճապահար թողնում են Անգլիան…

* * *

Իտալացի երգչուհի Ադելինա Պատտին մինչև հայտնի դառնալը նյութական քիչ նեղություններ չի կրել: Նա պարտքեր ուներ նույնիսկ մսավաճառին: Նրա անդրանիկ ելույթին ներկա է եղել նաև այդ մսավաճառը: Տեսնելով, թե հասարակությունն ինչպիսի խանդավառությամբ և ծաղիկներով է ընդունում երգչուհուն, նա ևս ցանկանում է մասնակցել երգչուհու մեծարմանը և դահլիճից բղավում է.

- Պատտի՛, Պատտի՛, մսի դիմաց մեր հաշիվները փակված համարեք:

* * *



Բեռնարդ Շոուն սիրում էր մշակել իր պարտեզը: Մի օր, երբ նա ջրում էր ծաղիկները, մի կին այցի եկավ տիկին Շոուին: Նա տանտիրոջը չէր ճանաչում և Շոուին դրեց պարտիզպանի տեղ:

-Վաղո՞ւց եք աշխատում Շոուների մոտ,- հարցրեց նա:

- Լավ չեմ հիշում, քսան-քսանհինգ տարի:

-Ձեզ գոնե լա՞վ են վճարում:

-Ինձ ուտելիք են տալիս, ծխախոտ, հագուստ:

-Տեսնում եմ, որ լավ պարտիզպան եք: Եկեք ինձ մոտ աշխատելու, ես լավ կվարձատրեմ:

-Ներեցեք, բայց տիկին Շոուն ինձ վարձել է մինչև կյանքիս վերջը:

-Բայց դա պարզապես ստրկություն է,- ճչաց կինը:

Եվ Բեռնարդ Շոուն ասաց.

-Ո՛չ, տիկի՛ն: Այն քաղաքում, որտեղ մենք ապրում ենք, դա կոչվում է ամուսնություն:

* * *

Ավտոմեքենան անթույլատրելի արագությամբ քշելու համար ոստիկանը կանգնեցրեց Չառլի Չապլինին:

-Ձեր դեմքն ինձ ծանոթ է,-ասաց նա,- այդ նշանակում է, որ Ձեզ էլի եմ տեսել:

-Հնարավոր է,-ասաց Չապլինը:

-Ահա տեսնո՞ւմ եք, Դուք հայտնի կարգ խախտող եք, ինքներդ էլ չեք ժխտում դա:

* * *

Մի անգամ Չառլի Չապլինի հետ տեղի ունեցավ զվարճալի դեպք. դուրս գալով մետրոյից՝ նա հանկարծ իր վերարկուի գրպանում հայտնաբերում է մի գեղեցիկ ժամացույց: Չապլինը մտնում է մոտակա ոստիկանական տեղամաս, պատմում տեղի ունեցածի մասին և նրանց է հանձնում ժամացույցը: Որքան մեծ է լինում նրա զարմանքը, երբ հաջորդ օրը նամակ է ստանում հետևյալ բովանդակությամբ.

«Թանկագի՛ն պարոն Չապլին: Այս նամակի հեղինակը պրոֆեսիոնալ գող-գրպանահատ է: Երեկ ես մետրոյում էի «աշխատում»: Հազիվ էի մի ինչ-որ մեկի գրպանից հանել ոսկե ժամացույցը, որ տեսա Ձեզ: Ես Ձեր տաղանդի մեծ երկրպագուն եմ, ուստիև խնդրում եմ՝ ինձանից ընդունեք այդ նվերը»:

* * *

Իտալացի հայտնի երգիչ Էնրիկո Կարուզոն չեկով մի զգալի գումար պետք է ստանար: Երբ նա բանկ է ներկայանում, պարզվում է, որ մոտը անձը հաստատող որևէ փաստաթուղթ չկա: Գանձապահը կտրականապես մերժում է նրան դրամը վճարել:

Կարուզոն վայրկենապես մտածում, որոշում է կայացնում, ու… բանկի ծառայողները նրա հիանալի կատարմամբ լսում են մի արիա «Տոսկա» օպերայից:

Դա լիովին բավական էր, որպեսզի գանձապահն իսկույն նրան վճարեր գումարը:

Դուրս գալով բանկից՝ Կարուզոն ասում է.

-Կյանքումս երբեք չեմ ձգտել երգել այնպես, ինչպես հիմա:

* * *

Դանիացի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակի դափնեկիր Նիլս Բորը պատերազմի ժամանակ հրաժարվեց համագործակցել Դանիան օկուպացրած գերմանացիների հետ: Հաշվի առնելով գիտնականի մեծ վաստակը՝ դաշնակիցները հատուկ ինքնաթիռ ուղարկեցին՝ Բորին գաղտնի Անգլիա տեղափոխելու համար: Օդաչուին զգուշացրել էին, որ նա շատ կարևոր «բեռ» է տեղափոխում: Վայրէջքից հետո օդաչուն ծիծաղելով գիտնականին ցույց տվեց նման դեպքերի տիպային հրահանգը: «Շատ կարևոր բեռներ փոխադրելու մասին» կետում ասվում էր, որ հակառակորդի հարձակման դեպքում բեռը պետք է նետել ծովը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ «Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն երեք հրապարակում ՄԳՇ-ում կամ մեկ մենագրություն.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) հայագիտություն և հումանիտար գիտությունների մասնագիտություններով առնվազն երկուսում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
բ) ինքնակենսագրություն,
գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
դ) լուսանկար (2 հատ),
ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,
ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,
թ) բնութագիր վերջին աշխատավայրից,
ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-56-32-54:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի Նյութագիտության լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական պետական կազմակերպություններում գիտական և ճարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան.

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ.

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների մասնագիտություններով՝ առնվազն վեց հրապարակում ՄԳՇ-ում կամ երկու մենագրություն.

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) ֆիզիկամաթեմատիկական գիտությունների մասնագիտություններով առնվազն երեքում հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
բ) ինքնակենսագրություն,
գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
դ) լուսանկար (2 հատ),
ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,
ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,
թ) բնութագիր վերջին աշխատավայրից,
ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Աշտարակ, Աշտարակ-2, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ.՝ +374 10 288150:

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 26.11.2024 թ.:
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: